political dialogue

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՉԵԿՈՒՅՑ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄՊԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ՈՒԺԻ 2019Թ.- Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS POLITICAL EVERYTHING IS P

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄՊԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎՈՐՈՂ ՈՒԺԻ 2019Թ.-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական կոմպաս 3
Կոմպասի մասին 3
Կոմպասը լրացրած օգտատերերի սեռատարիքային կազմը և ներկայացվածությունը՝ ըստ մարզերի 3
Հասարակական ընկալումները և միտումները 5
Պատերազմ և խաղաղություն 5
Սոցիալական հարցեր 7
Սոցիալ-տնտեսական հարցեր 9
Էթնիկ և կրոնական հարցեր 10
Բնապահպանական հարցեր 13
Այլ հարցեր 14

Մոնիթորինգ 17
Մոնիթորինգի մասին 17
Կառավարության ծրագիր 17
Պետական կառավարման համակարգի օպտիմալացում . .19
Անվտանգության ոլորտի բարեփոխումներ 22
Առողջապահական ոլորտի բարեփոխումներ 26
Կրթական բարեփոխումներ 30

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄՊԱՍԻ ԶԵԿՈՒՅՑ

ԿՈՄՊԱՍԻ ՄԱՍԻՆ

Քաղաքական կոմպասը «Քաղաքական երկխոսության» կողմից պատրաստված հարցաշար է՝ քաղաքագետ և հետազոտող Էդգար Վարդանյանի հետ համագործակցությամբ և Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

«Քաղաքական երկխոսության» ՏՏ թիմի կողմից մշակված խելացի ալգորիթմի միջոցով ծրագիրը օգտվողներին տեղակայում է քաղաքական կոորդինատային առանցքի վրա՝ ցույց տալով իրենց մոտավոր դիրքը քաղաքական - գաղափարական տարապատկերում:

Պետք է շեշտել, որ սույն զեկույցը գիտական եզրակացություն չէ, ոչ էլ նպատակ է հետապնդում պնդել, թե ինչպիսի համոզմունքեր ունի հասարակությունը: Չնայած հարցաշարը պատրաստվել է քաղաքական տեսությունների հիման վրա՝ կոմպասը ընդհանրապես, և այս զեկույցը, մասնավորապես, նպատակ ունեն պարզապես հետևել սոցիալ-հասարակական տարբեր միտումների:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՄՊԱՍԸ ԼՐԱՑՐԱԾ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ

Կոմպասը լրացվել է 2244 անգամ: Լրացնողների մեծ մասը 18-35 տարիքային խմբի ներկայացուցիչներ են: Համաձայն ՀՀ օրենսդրության՝ 18-35 տարեկան քաղաքացիները համարվում են երիտասարդներ: Այս տարիքային խմբի զգալիորեն անհամաչափ ներկայացվածությունը կանխատեսելի էր, քանի որ կոմպասը առցանց գործիք է, որը գովազդվում է միայն սոցիալական մեդիայի հարթակներում, որն էլ հիմնականում օգտագործվում է այս տարիքային խմբի կողմից:



Բացի այդ, օգտատերերի 55% -ը տղամարդիկ են, 41% -ը կանայք, 4% -ն էլ չեն նշել սեռը:



Ավելին, հարցաշարը լրացվել է Հայաստանի տարբեր մարզերի բնակիչների կողմից՝ հետևյալ ներկայացվածությամբ (համեմատության համար 2011թ.- ի մարդահամարը նույնպես ներկայացված է ստորև):



Օգտատերերի գրեթե 27%-ը տոկոսը չեն նշել իրենց մարզը՝ թողնելով անորոշության բավականին մեծ բաժին՝ պարզելու համար, թե որքան համաչափ է եղել կոմպասի տարածումը աշխարհագրական իմաստով:



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Պատերազմի և խաղաղության մասին հարցերը ծայրաստիճան զգայուն են մեր հասարակության համար, այնչափ, որ մոտ են տաբու դառնալուն: Ավելին, տասնամյակներ շարունակ Հայաստանի իշխանությունները ոչ միայն միլիտարիզացրել են հասարակությունը, այլև օգտագործել են թեմայի զգայունությունը՝ ապահովելու իրենց՝ համարյա թե գոյություն չունեցող լեգիտիմությունը: Այս թեման միշտ օգտագործվել է հասարակության ուշադրությունը երկրի լուրջ խնդիրներից շեղելու համար: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ տասնամյակներ շարունակ Հայաստանի և Ադրբեջանի իշխանությունների հռետորաբանությունը ԼՂ խնդրի վերաբերյալ տարբեր մակարդակներում է եղել: Ադրբեջանի իշխանությունները, և հատկապես նախագահ Ալիևը շատ հաճախ օգտագործում են

ռազմական հարձակման սպառնալիքների հռետորաբանությունը՝ ներառյալ հայտարարությունները առ այն, թե «Երևանը մեր պատմական տարածքն է»: Հայաստանի իշխանություններն այս տեսանկյունից միշտ ավելի զուսպ են եղել:

Կարելի է ենթադրել, որ այդ հռետորաբանությունները որոշակիորեն ազդել են հասարակության ընկալումների վրա, և կոմպասի հարցաշարի արդյունքներն այս պնդման ապացույցն են: Օգտատերերը, որոնք հիմնականում երիտասարդներ են Հայաստանից, հասկանում են հասարակությանը խաղաղության պատրաստելու անհրաժեշտությունը, կարծում են, որ ագրեսիվ գրոհ (պատերազմ) սկսելը խնդիրների լուծման ընդունելի միջոց չէ:







ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Կոմպասում ներառված սոցիալական թեմաներին առնչվող որոշ հարցերը նպատակ ունեին պարզելու, թե մարդիկ որքանով են հարում լիբերալ կամ պահպանողական գաղափարներին: Չնայած կան պատասխանների որոշակի տոկոսային տարբերություններ՝ կախված հարցերից, արդյունքները ցույց են տալիս, որ, ինչպես սպասվում էր, օգտատերերը ունեն պահպանողական հայացքներ, երբ խոսքը վերաբերում է սոցիալական նորմերին: Այնուամենայնիվ, ավելի մտահոգիչ է այն, որ շատ դեպքերում տաբուի հասնող հարցերի հիմքում իրազեկության պակասն է և անգիտությունը, որը չի կարելի բնութագրել որպես պահպանողականություն: Օրինակ՝ կանանց վերարտադրողական իրավունքները կամ ԼԳԲՏ+ անձանց ազատ տեղաշարժման և հավաքների ազատությունը դեռևս ծայրահեղ տաբու համարվող թեմաներ են, ուստի մեծամասնությունը տեսակետներ ունի, որոնք ոչ միայն պահպանողական մոտեցում են ցուցաբերում, այլև մարդու իրավունքների հանդեպ հարգանքի պակաս:

ՀՂՒՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ, ՊԵՏՔ Է ԱՐԳԵԼՎԵՆ



ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՒ ՎԱՃԱՌՔԸ ՊԵՏՔ Է ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼ



ՄԱՐՄՆԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼ



ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ՉՊԵՏՔ Է ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆՄԱՆՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՎԱՔՆԵՐ



ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի բնակչության մոտավորապես մեկ երրորդը՝ ըստ պաշտոնական վիճակագրություն համարվում է աղքատ, սակայն հետաքրքիր է, որ սա հասարակության մեջ ատելություն չի առաջացրել մեծահարուստների նկատմամբ: Իհարկե, այն օլիգարխները, որոնք հիմնականում կապված են նախորդ ռեժիմի կոռուպցիոն սխեմաների հետ, հասարակության շրջանում հակակրանքի են արժանանում, բայց մնացած դեպքերում հարուստների հանդեպ ատելություն չկա: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է հարկմանը, հարցաշարը լրացնողները հիմնականում համաձայն են, որ արդար է, եթե հարուստները վճարեն ավելի բարձր հարկեր (ավելի մեծ տոկոսով), իսկ աղքատները՝ ավելի քիչ (պրոգրեսիվ հարկում):

ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐ Է, ԵԹԵ ՆՐԱՆՔ ԻՐԵՆՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՍՏԱԿԵԼ ԵՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ



ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԹՈՒՅԼ ՉՏԱ, ՈՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՆ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԵՐ՝ ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ՆՐԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԱՅՍՊԻՍԻՆ. ՈՐՔԱՆ ԱՎԵԼԻ ՀԱՐՈՒՍՏ Է ՄԱՐԴԸ, ԱՅՆՔԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՈՎ ՀԱՐԿ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԻ



ԷԹՆԻԿ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայաստանը մոնոէթնիկ, իրեն սահմանակից չորս երկրներից երկուսի հետ փակ սահմաններ ունեցող երկիր է՝ փոքր տարածքով և աշխարհիով մեկ տարածված սփյուռքով, որտեղ մարդիկ հակված են ազգայնականությանը և կրոնականությանը: Պնդմանը, թե ոչ քրիստոնեական երկրներից միգրանտների հոսքը պետք է լինի խիստ սահմանափակ, օգտատերերի 41%-ը համաձայն չէ, 26%-ը համաձայն է: Ճիշտ է, 26%-ը բարձր և մտահոգիչ արդյունք է, սակայն զարմանք չի առաջացնում: Իհարկե, սա նաև անցյալում պետական ինստիտուտների կողմից միլիտարիզացման և ազգայնական քա-

րոզչության հետևանք է: Հաճախ այս թեմաները քննարկելիս քաղաքացիները խուճապի զգացողություն են ունենում կամ վախենում են այլազգիների հնարավոր գերակայությունից, եթե նրանք գաղթեն և թվով գերազանցեն հայերին: Որոշ փորձագետներ էլ սա համարում են ազգային անվտանգության խնդիր՝ հաշվի առնելով նաև այն, որ երկիրը փաստացի գտնվում է պատերազմի մեջ: Կա մեկ այլ տեսակետ ևս, որ ազգի պատմական հիշողությունը ուժեղացնում է նման վախը կամ մտահոգությունը: Ավելի ուշագրավ է այն փաստը, որ օգտատերերը գրեթե նույնությամբ և հավասարապես բաժանվել են խմբերի, որոնք համաձայն են կամ համաձայն չեն՝ «Մեր ժողովուրդը վեր է մյուսներից» պնդմանը:

Հարցվողները հիմնականում համաձայնել են (67%), որ պետությունը որևէ կրոնական խմբի կամ եկեղեցու չպետք է արտոնյալ կարգավիճակ տա: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ շատ պատասխանողներ Հայ Առաքելական եկեղեցին չեն համարել «որևէ կրոնական կազմակերպություն» արտահայտության մի մաս, քանի որ թեմային վերաբերող այլ հարցերի պատասխանները ցույց են տալիս կրոնական բազմազանության հանդեպ հանդուրժողականության ցածր մակարդակ: Պատասխանողների 55%-ը համաձայն չէ կամ կտրականապես համաձայն չէ «Եկեղեցին և պետությունը պետք է անբաժան լինեն» պնդմանը:



ԱՅԼԱԴԱՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՄԵՐ ԵՐԿԻՐ ՊԵՏՔ Է ԽԻՍՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ



ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉՊԵՏՔ Է ԱՐՏՈՆՅԱԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱ ՈՐԵՒԷ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ԵԿԵՂԵՑՈՒ



ԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏՔ Է ԱՆԲԱԺԱՆ ԼԻՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Վերջին 10 տարիներին տեղի ունեցած 3 խոշոր բնապահպանական շարժումները՝ Թռչկանը, Թեղուտը և Ամուլսարը, ցույց են տալիս, որ մեր հասարակությունն ամենևին էլ անտարբեր չէ բնապահպանական խնդիրների հանդեպ: Եվ այս առումով կոմպասի արդյունքները բավականին հետաքրքիր են, մասնավորապես, օգտատերերը բավականին սուր դիրքորոշում ունեն, երբ խոսքը վերաբերում է այն ձեռնարկություններին, որոնք աղտոտում են բնությունը, բայց երբ հարցի մեջ նշվում է տնտեսական օգուտի և նոր աշխատատեղերի մասին, օգտատերերի արձագանքն ավելի մեղմ է:





ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Հայաստանում դատական բարեփոխումների քննարկումը վերջին ամիսների ընթացքում հիմնական թեմաներից է: Այս քննարկումների ֆոնին կոմպասը լույս է սփռում այն բանի վրա, թե ինչպես են օգտվողները ընկալում արդարադատությունը: Հետաքրքրական է, որ օգտատերերի 47% -ը չի համաձայնել «արդարադատության հիմնական նպատակը իրավախախտներին պատժելն է» պնդմանը, ինչից կարելի է ենթադրել, որ հարցվողների այդ մասը կարծում է, որ հիմնական նպատակը իրավախախտի ռեաբիլիտացիան է:



Առավելագույն «համաձայն եմ» պատասխանը ստացած հարցերից մեկը հետևյալն է. հանրային ենթակառուցվածքները՝ ճանապարհները, էլեկտրականությունը, ջուրը և այլն պետք է լինեն պետության սեփականությունը: Սա հետաքրքիր է այն առումով, որ շատ օգտատերեր էլ կարծում են, որ պետությունը ավելի անարդյունավետ է կառավարում, քան մասնավոր ձեռնարկությունները: Ինչևէ, արդյունքները, հավանաբար, հիմնված են անվտանգության մտահոգությունների և ոչ թե արդյունավետության խնդրի վրա:

ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ, ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ, ՔԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ՝ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՋՐՄՈՒՂԸ ԵՒ ԱՅԼՆ, ՊԵՏՔ Է ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵՆ



Հայաստանը հաճախ թե՛ քննադատվել, թե՛ գովաբանվել է միջազգային ինտեգրացիոն տարբեր միություններին անդամակցելու իր արտաքին քաղաքականության համար, ուստի հետաքրքիր է տեսնել, թե ինչպես է հասարակությունն արձագանքում այս հարցին:

Օգտատերերի 67% -ը համաձայն չէ, որ ինտեգրացիոն միությունները իջեցնում են պետության ինքնիշխանության մակարդակը:

ՉՊԵՏՔ Է ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՈՐԵՒԷ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՔԱՆԻ ՈՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՎ՝ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՐԿՎՈՒՄ ԵՆ ԻՆՔԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ



ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԱՍԻՆ

«Քաղաքական երկխոսություն» կազմակերպությունը կարևորում է կառավորող ուժի հետևողականությունը՝ տրված խոստումների հանդեպ և թափանցիկությունը դրանց իրականացման հարցում: Մենք 2019թ.-ին մի քանի ոլորտներում ուսումնասիրել և մշտադիտարկել ենք կառավարող ուժի նախընտրական և հետընտրական խոստումների համապատասխանությունը, փորձել ենք հասկանալ, թե կառավարող ուժի կողմից իրականացված քայլերը ինչքանով են բխում իրենց կողմից տրված խոստումներին և կառավարության ծրագրին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2019թ.- ի փետրվարի 12-ին իր աշխատանքը մեկնարկեց 7-րդ գումարման Ազգային ժողովը: Առաջին նստաշրջանի օրակարգային յոթ հարցերից մեկը կառավարության ծրագրին հավանություն տալն էր:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շուրջ երկու ժամ տևած իր ելույթում ներկայացրեց կառավարության ծրագիրը և խոսքը եզրափակեց հետևյալ կերպ. «*Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հեղափոխությունը հայտարարում եմ մեկնարկած»:*

> *«Տնտեսական քաղաքականության հիմքում լինելու է արտահանմանը, զբաղվածության ընդլայնմանը, աշխատանքի քաջալերմանը միտված ներդրումային քաղաքականությունը: Արդյունքում տնտեսության կառուցվածքը պետք է էական փոփոխություններ կրի. բարձր տեխնոլոգիաների արդյունաբերությունը պետք է դառնա տնտեսության լոկոմոտիվը»:*
>
> ***կառավարության ծրագիր 2019թ.***

Չնայած կառավարության ծրագիրը բավականին ընդգրկուն էր և ներառում էր հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր շեր-

տերը, այնուամենայնիվ, վարչապետն իր ելույթում պարբերաբար շեշտում էր ծրագրի՝ հենց տնտեսության համար հեղափոխական լինելու հանգամանքը: Նրա խոսքով՝ նախանշված բարեփոխումները կրթության ոլորտում, կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության համակարգի առողջացման շրջանակներում ստեղծելու են մեր տնտեսության զարգացման համար աննախադեպ պայմաններ: Ազգային ժողովում կառավարության ծրագրի քննարկումը շարունակվեց երեք օր:

Խորհրդարանական ընդդիմության քննադատության հիմնական հասցեատերը դարձավ վարչապետի վերոնշյալ արտահայտությունը: Ընդդիմադիր երկու խմբակցությունների քննադատության հիմնական առանցքն այն էր, որ կառավարության ծրագրի մեջ կոնկրետ թվեր գրեթե չկան, այն չափելի չէ և, հետևաբար, չի կարող տնտեսության համար հեղափոխական լինել:

Ընդդիմադիր պատգամավորների խոսքերով՝ այս ծրագիրը իրավական որոշակիության և տնտեսական ցուցանիշների չափելիության առումով շատ թույլ է:

Հետաքրքրական է, որ ի տարբերություն կառավարության ծրագրի՝ խորհրդարանական մեծամասնություն կազմող «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրը այս խնդիրը չուներ և գրեթե բոլոր ոլորտների համար սահմանել էր ժամանակի և արդյունքի չափելիության ցուցանիշներ:

«Բարենպաստ ներդրումային միջավայր ձեւավորելու համար նվազեցնելու ենք շահութահարկի, եկամտային հարկի և շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերը: Մասնավորապես՝ շահութահարկի գործող 20% դրույքաչափը իջեցնելու ենք՝ հասցնելով այն 18%-ի, ռեզիդենտների եւ ոչ ռեզիդենտների շահաբաժիններն այսուհետ հարկվելու են միասնական 5% դրույքաչափով: 2019 թվականից կսահմանվի եկամտային հարկի համահարթ 23% դրույքաչափ, ապա մինչև 2023 թվականը այն աստիճանաբար կնվազի մինչև 20%»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Կառավարության ծրագրի շուրջ ձևավորված հանրային դիսկուրսը մամուլում, սոցիալական հարթակներում, փորձագիտական շրջանակներում վկայում է այն մասին, որ ծրագիրը միանշանակ չի ընդունվել հանրության կողմից ևս: Լուրջ քննարկումների առիթ դարձավ այն հանգամանքը, որ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում առկա մի շարք դրույթներ այդպես էլ չընդգրկվեցին կառավարության ծրագրում: Օրինակ՝ «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրի «*տնտեսական բարեփոխումների առաջնահերթություններ*» բաժնի 8-րդ կետը, այն է՝ **«լրամշակելու ենք «Շքեղության հարկի մասին օրենքը», ընդլայնելու և հանրայնացնելու ենք շքեղության հարկի օբյեկտը և շքեղության հարկ վճարողների ցանկը՝ հավաքագրումների և բաշխումների նկատմամբ սահմանելով հանրային հսկողության առցանց գործիքակազմ՝ ուղղված սոցիալական արդարության վերականգնմանը»,** որևէ կերպ չներառվեց կառավարության ծրագրում:

Կառավարության ծրագիրը ընդունվեց 81 կողմ և 37 դեմ ձայների համամասնությամբ:

Կառավարության ծրագրով նախանշվում են նաև հարկային համակարգի բարելավման անհրաժեշտությունները: Խորհրդարանական ընտրություններից հետո գործադիրը ներկայացրեց **ՀՕ (Հարկային օրենսգիրք) փոփոխությունների փաթեթը:** Իշխող ուժի ներկայացուցիչներն այս փաթեթի կազմումը մեկնաբանում էին որպես տնտեսական հեղափոխության սկիզբ, իսկ բուն փաթեթը համարում տնտեսական հեղափոխության շարժիչ ուժ: 2019 թ.-ի հունիսի 25-ին օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ ամբողջությամբ ընդունվեց խորհրդարանի կողմից:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ

Պետական կառավարման համակարգի ուռճացված լինելու և դրա ոչ արդյունավետ աշխատանքի մասին խոսվում էր քաղաքական նոր կոնյունկտուրայի հաստատման հենց ամենասկզբից: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2018թ.-ի օգոստոսին հայտարարեց,- «*պետական կառավարման համակարգն ուռճացված է, և կարծում եմ,*

որ սա ակնհայտ է բոլորին: Եվ այդ ուռճացվածության պատճառով նաև անարդյունավետ է»:

«Պետական կառավարման ուռճացված համակարգը՝ իր տեսանելի և անտեսանելի մարմինների չարդարացված ծավալով, գործառույթների և ոլորտների կրկնողությամբ, դրա հետևանքով առաջացած անարդյունավետությամբ, պատասխանատվության մեխանիզմների անորոշությամբ հիմնազուրկ բեռ է հարկ վճարողների համար և լրջագույն խոչընդոտ՝ Հայաստանի մրցունակության բարձրացման ճանապարհին»:

Կառավարության ծրագիր 2019թ.

Արդեն 2018թ.-ի հոկտեմբերին առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը լրագրողներին հայտնեց՝ պետական կառավարման համակարգի օպտիմալացումը և դրանում արմատական փոփոխությունների կատարումը կառավարության օրակարգային հարցերից է: Նրա խոսքով՝ նախարարությունների թիվը ներկայիս 17-ի փոխարեն առաջիկայում կդառնա 9-11: Նա շեշտեց, որ պետական կառավարման համակարգին զուգահեռ գործում են հիմնադրամներ, ՊՈԱԿ–ներ, որտեղ ավելի մեծ ֆինանսական հոսքեր ու ռեսուրսներ կան, և որոնք կրկնում են այն գործառույթները, որ պետք է նախարարություններն անեն: Այսինքն՝ պետք է այս ամենը վերանայել, բոլորի գոյությունը հատ–հատ վերաիմաստավորել:

Նախատեսվող օպտիմալացումը ենթադրում էր նաև մեծ քանակի կրճատումներ: Սա բողոքի մեծ ալիք բարձրացրեց լուծարման և վերամիավորման ենթակա պետական կառույցների աշխատակիցների մոտ: ԱԺ նախկին փոխնախագահ Արփինե Հովհաննիսյանը հրապարակել էր կառավարության ներքին գրություններից մեկը, որում փոխվարչապետն ու ֆինանսների նախարարը կարծիք էին հայտնում, որ պետությունը կշահի, «եթե հավելյալ արդյունք չստեղծող 10 հազար հանրային ծառայողներ դառնան գործազուրկ»:

2019թ.-ի մարտին հարցին անդրադարձավ նաև վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ նշելով՝ կառավարությունը չի պատրաստվում «գերանդին առնել ու հնձել պետական կառավարման համակարգը»:

Նրանք ներառվելու են կառավարության կադրային բանկ և հետագայում հնարավորություն են ունենալու շարունակել ծառայությունը պետական համակարգում:

Չնայած հանրային դժգոհություններին՝ այս որոշումը պետք է սպասված լիներ, քանի որ «Իմ Քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում կար այս մտադրության մասին մանրամասն դրույթ.

«Վեր ենք հանելու պետական բոլոր գերատեսչությունների կրկնվող գործառույթները և վերջիններիս օպտիմալացման արդյունքում մեծացնելու ենք պետական գերատեսչությունների ծախսարդյունավետությունը և աշխատանքի արդյունավետությունը: Այնուհետև կատարողականի գնահատման համակարգի բարեփոխման արդյունքներով փոքրացնելու ենք պետական ահռելի մեքենան՝ նպաստելով պետական ռեսուրսների ճիշտ կառավարմանը և բարձրացնելով պետական աշխատողների վարձատրությունը: Այս խնդիրների լուծումը, սակայն, չի հանգեցնելու կադրային ջարդի և գործազրկության, և այս բարեփոխումների համատեքստում մշակելու ենք միջոցառումներ այս ռիսկերը չեզոքացնելու համար»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Ըստ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» նոր օրենքի՝ հինգ նախարարություն կրճատվել է, նախկին 17-ի փոխարեն գործում է 12-ը: Կրճատվեց առաջին փոխվարչապետի պաշտոնը, երեքի փոխարեն մնացին երկու փոխվարչապետներ: Կրթության, սպորտի և մշակույթի նախարարությունները միավորվեցին: Գյուղատնտեսության նախարարությունը ներառվեց Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում: Սփյուռքի նախարարությունը լուծարվեց, դրա փոխարեն վարչապետի աշխատակազմում ստեղծվեց Սփյուռքի հարցերով հանձնակատարի գրասենյակ՝ 25 հաստիքով: Ոստիկանությունն ու Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) շարունակում են գործել վարչապետի ենթակայության ներքո:

Ազգային ժողովում «Կառավարության կառուցվածքի եւ գործունե-

ության մասին» օրենքի նախագիծը քննարկվեց 2019թ.-ի ապրիլի 18-ին և մայիսի 8-ին՝ համապատասխանաբար 1-ին և 2-րդ ընթերցմամբ: Օրենքի նախագծի քննարկումներն անցան բուռն մթնոլորտում: Նախագիծն ընդունվեց ձայների 79 կողմ, 41 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ:

2019թ-ի հուլիսից կառավարությունը գործում է նոր կառուցվածքով, բայց մինչ օրս պաշտոնական թվեր, թե օպտիմալացման արդյունքում քանի աշխատատեղ է կրճատվել, ընդհանուր առմամբ, ինչքան գումար է խնայվել, և ուր պետք է ուղղվեն խնայված միջոցները, դեռևս չկան:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

1994թ.-ի Բիշքեկյան զինադադարից ի վեր հայկական կողմը հակառակորդի կրակից ունեցել է 2000-ից ավելի զոհ: Այս իրավիճակը այսօր էլ համար մեկ մարտահրավերներից է իշխանության համար: Կառավարությունն իր ծրագրի «*Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հիմնարար ուղենիշները*» գլխի առաջին կետով սահմանում է՝

> *«Հայաստանի արտաքին և ներքին անվտանգության ապահովում, Արցախի անվտանգության երաշխավորում և շարունակական ամրապնդում»:*
>
> ***Կառավարության ծրագիր 2019թ.***

Ռազմական ոլորտի և, մասնավորապես, բանակի բարեփոխումների անհրաժեշտության մասին խոսում էր դեռևս ժամանակավոր կառավարությունը, որը և կատարեց դրան ուղղված առաջին խոշոր քայլը: 2018թ.-ի դեկտեմբերի 27-ին կառավարությունը որոշեց պահուստային ֆոնդից ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացնել 5 մլրդ 705 մլն դրամ՝ զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն զինվորական ծառայության ընթացքում սեփականության իրավունքով անհատույց բնակարան

չստացած և զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողներին բնակարան ձեռք բերելու նպատակով աջակցություն ցուցաբերելու համար:

Զինված ուժերի սպառազինության արդիականացման, ռազմատեխնիկական հագեցվածության, մարտունակության բարձրացման մասին թե՛ «Իմ քայլը» դաշինքը իր նախընտրական ծրագրում, թե՛ կառավարությունն իր ընթացիկ ծրագրում բավականին հավակնոտ շեմ են սահմանել:

«Զինված ուժերը համալրված են լինելու այսօրվա ռազմական գիտության պահանջներին համապատասխան արդիական զինատեսակներով և տեխնոլոգիաներով, գերճշգրիտ հեռահար հրթիռային հարվածների, հրետանային խոցման և հակաօդային պաշտպանության ժամանակակից համակարգերով, որոնք ավելացնելու են իրենց հարվածային և կրակային խոցման հեռավորությունը, ճշգրտությունը և արդյունավետությունը, հետևողականորեն զարգացնելու են բազմաֆունկցիոնալ ավիացիան, անօդաչու թռչող սարքերի համակարգերը, հակառակորդի տարածքի ամբողջ խորությամբ ռադիոէլեկտրոնային ու օդային հետախուզության կարողությունները: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը համալրվելու են ռազմական կործանիչներով»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

«Անձնակազմի մարտական վարպետության բարձրացման նոր չափանիշների սահմանմամբ կառավարությունը միտված է զինված ուժերը համալրել գերճշգրիտ հեռահար հրթիռային հարվածների, հրետանային խոցման և հակաօդային պաշտպանության արդի համալիրներով, բազմաֆունկցիոնալ ավիացիայով և ավտոմատացված ու ռոբոտացված օդային և վերգետնյա համակարգերով՝ այդպիսով ավելացնելով անհրաժեշտ խորությամբ հետախուզության, զորաշարժի և կրակային խոցման հեռավորությունը, ճշգրտությունը և արդյունավետությունը: Անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչ է լինելու հայրենական

ռազմական արդյունաբերության զարգացումը, ուշադրության կենտրոնում է մնալու տեխնիկական միջոցներով առաջնագծի հետևողական համալրումը և մարտական հերթապահության արդյունավետությունն ու անվտանգության բարձրացումը»:

Կառավարության ծրագիր 2019թ.

Հայաստանի Զինված ուժերը համալրվել են զենիթահրթիռային «Տոռ-Մ2ԿՄ» համալիրներով, որը, ըստ ռազմական փորձագետների, կարևոր քայլ է Հայաստանի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համակարգն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

«2019 թվականի արտադրության: Սա այս տարվա մեր ամենակարեւոր ձեռքբերումներից է: Քանակի մասին ոչինչ ասել չեմ կարող: Ռազմական գաղտնիք է», - 2019 թ.-ի դեկտեմբերի 21–ին ֆեյսբուքյան իր էջում գրել է Նիկոլ Փաշինյանը:

Սակայն Ռազմինֆո կայքը հայտնում է, որ վերոնշյալ ԶՀՀ-ների ձեռքբերման մասին հայտնի էր դարձել դեռևս 2018-ի մայիսին ՀՀ ՊՆ «Զինուժ» հեռուստածրագրի թողարկումից: Այն ժամանակ նշվել էր, որ մի քանի ամսվա ընթացքում համալիրներն արդեն կլինեն զինված ուժերում:

Բանակի շատ խիստ զինվելու, նորագույն տեսակի և մեծածավալ սպառազինության ձեռք բերման մասին այս տարվա մայիսին խոսեց Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը: Նա նշեց, որ մեր բանակը ոչ թե ձգտում է հակառակորդի հետ բալանսի, այլ առավելության:

Բացի բանակի ռազմատեխնիկական հագեցվածությունից, կառավարությունը առաջնահերթություն է համարում զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովվածությունն ու բարեկեցիկ կյանքը:

Վարչապետ Փաշինյանը տարվա գլխավոր ձեռքբերում է համարել նաև ՍՈւ-30 ՍՄ բազմաֆունկցիոնալ գերժամանակակից ինքնաթիռների ձեռքբերումը՝ ֆեյսբուքյան ուղիղ եթերում ցուցադրելով ինքնաթիռների թռիչքը:

«Կառավարությունը նախատեսում է զարգացնել զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության համակարգը, երաշխավորել նրանց ամբողջական և որակյալ իրային ու պարենային բավարարումը: Սոցիալական պաշտպանվածության, զինվորական ծառայության գրավչության մակարդակի բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել բնակարանային և բժշկական ապահովման ծրագրեր»:

Կառավարության ծրագիր 2019թ.

2019թ.-ի հունիս 1-ից կառավարության որոշմամբ 10% տոկոսով բարձրացել է պայմանագրային զինծառայողների աշխատավարձը, իսկ կրտսեր կազմի և հատուկ պայմաններում ծառայություն իրականացնող զինծառայողների աշխատավարձը՝ 20%-ով:

2019թ.-ի օգոստոսի 8-ի նիստում կառավարությունը որոշեց բարձրացնել պարտադիր ժամկետային զինծառայողների դրամական ապահովության ամսական գումարը: Հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի անձնակազմի համար՝ 2000, իսկ մնացած զորամասերի համար՝ 1000 դրամով:

Սահմանված դրամական ապահովության չափերը 2009թ.-ից փոփոխության չէին ենթարկվել:

Պաշտպանության նախարարության կողմից մշակվել և արդեն իսկ մի քանի զորամասերում ներդրվել է զինծառայողներին պատշաճ սննդի ապահովման նոր համակարգ՝ ընդլայնված ճաշացանկով և թարմ սննդամթերքով:

2019թ. ամառային զորակոչի ընթացքում պարտադիր զինվորական ծառայության է զորակոչվել կանխատեսվածից մոտ 15 տոկոս ավելի քաղաքացի: Նախորդ զորակոչերի համեմատ այս զորակոչի ընթացքում ընդհանուր առմամբ մոտ 10 տոկոսով նվազել է առողջական վիճակի սահմանափակում ունեցող զորակոչված քաղաքացիների թվաքանակը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Այն երկրները, որոնք ունեն աղքատության բարձր մակարդակ և սոցիալական ապահովության ցածր մակարդակ, լուրջ խնդիրներ ունեն նաև հանրային առողջապահության հետ:

«Քաղաքացիների համար առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել բժշկական ապահովագրության այնպիսի համակարգի ներդրումը, որ բժշկական օգնության և բժշկական սպասարկման անհրաժեշտություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացու պատշաճ և ժամանակին տրամադրվեն այդ ծառայությունները՝ անկախ սեռից, տարիքից, բնակության վայրից և սոցիալական կարգավիճակից»:

Կառավարության ծրագիր 2019թ.

Պետության կողմից քաղաքացիներին ուղղակի մատուցվող բուժօգնության որակը բարձրացնելու նպատակով մեկ տարվա կտրվածքով երկու անգամ բարձրացել են պետական բժշկական հաստատությունների, պոլիկլինիկաների և ամբուլատորիաների բուժաշխատողների աշխատավարձերը՝ 30-ից 40 տոկոսով: Պոլիկլինիկաների ու ամբուլատորիաների աշխատակիցների աշխատավարձը 2019թ.-ից 178 հազարից դարձել է 240, բուժքույրերինը՝ 80-ից 100 հազար դրամ: Խոսքը մոտ 11 հազարանոց անձնակազմի մասին է, նեդրառյալ բոլոր մարզերը: ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը նշում է, որ դրանք դրույքաչափերն են, ոչ թե իրական գումարները: Բարձրանում է բոլորի աշխատավարձը՝ առանց հավելյալ ֆինանսական միջոցների: Նախատեսվում է նաև մինչև այս տարվա վերջը ներդնել բուժաշխատողների ապահովագրության համակարգ: Նրա խոսքով՝. «Բոլոր բաղադրիչները դեռ որոշված չեն: Որոշված չէ, թե աշխատող քաղաքացիների աշխատավարձի քանի տոկոսը պետք է փոխանցվի հիմնադրամին, բայց ես կարող եմ ասել, թե աշխարհում, օրինակ, ինչ տոկոսներ կան, սկսած երկու տոկոսից մինչև

30 տոկոս: Մենք հակված ենք սկսել փոքր տոկոսներից, որպեսզի քաղաքացիների վրա մեծ բեռ չլինի, չնայած դա բեռ անվանելն էլ է սխալ, քանի որ դու միանգամից օգտվում ես դրա արդյունքներից»:

«Կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը՝ ապահովելով արդիական, բարձր որակի և համապարփակ առողջապահական ծառայությունների մատուցումը»:

Կառավարության ծրագիր 2019թ.

Առողջապահության նախարարության կողմից հանրային առողջության պահպանմանն ուղղված լուրջ քայլ կատարվեց 2018թ.-ի հոկտեմբերին, երբ նախարարությունը շրջանառության մեջ դրեց «Ծխախոտի օգտագործման եւ ծխախոտի ծխի ազդեցության հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» աղմկահարույց օրենքի նախագիծը: Նախագծի ընդունումը հետաձգվեց, որովհետև բողոքի ցույցեր էին անցկացնում սպասարկման ոլորտի տնտեսվարողները և աշխատակիցները, որոնց գործունեության վրա նոր օրենքը բացասական ազդեցություն էր ունենալու:

Սեփական նախընտրական ծրագրային դրույթներին հավատարիմ մնալու տեսանկյունից հարկ է նշել, որ «Իմ Քայլը» նախընտրական ծրագրում նշված էր.

«Իրականացնելու ենք առողջ ապրելակերպի վարքագծի ձեւավորմանն ուղղված քարոզարշավներ, մշակելու ենք միջոցառումներ բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների առաջացմանը նպաստող ռիսկի գործոնների նվազեցման ուղղությամբ (անառողջ սնունդ, ծխախոտ, ալկոհոլ, ֆիզիկական թերակտիվություն եւ այլն)»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Նախարարությունը 2019թ.-ի մայիսին նորից հանրային քննարկման ներկայացրեց ծխելու դեմ պայքարի օրենքի նախագիծը՝ լրամշակված տարբերակով: Ըստ նախագծի՝ ծխելն արգելված կլինի փակ եւ կիսափակ հանրային տարածքներում, այդ թվում՝ շքամուտքերում, աշխատանքային տարածքներում՝ անկախ սեփականության ձևից, բուժհաստատություններում, ուսումնական հաստատություններում, մանկապատանեկան մարզական կազմակերպությունների տարածքներում, երեխաների համար նախատեսված խաղահրապարակներում և խաղային պուրակներում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքներում (բացառությամբ այն հուշարձանների, որոնք համարվում են բնակելի տներ), բնության հատուկ պահպանվող տարածքներում, հասարակական տրանսպորտի կանգառների ծածկերի տակ, հյուրանոցային տնտեսության օբյեկտների տարածքներում: Խստացվում են նաև տուժաչափերը՝ ավելանալով մի քանի անգամ:

Առողջապահության ոլորտի փորձագետները հույս են հայտնում, որ օրենքի ընդունման և իրապես գործելու պայմաններում տարեկան կունենանք 1,5-2 տոկոս ծխողների թվի նվազում:

Հանրային առողջության և անվտանգության պահպանման նպատակով նախարարության կողմից իրականացվել են հետևյալ փոփոխությունները.

- Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվել է սանավիացիոն ծառայություն՝ տվյալ տարածքում անհրաժեշտ բուժօգնության բացակայության պայմաններում քաղաքացիներին ուղղաթիռով անհապաղ անհրաժեշտ վայր տեղափոխելու համար:
- Չարորակ ուռուցքների վիրահատությունը 2019թ.-ի հունվարից անվճար է:
- Իշեմիկ կաթվածի՝ «ինսուլտի» բուժումը 2019թ.-ի փետրվարից անվճար է:
- 0-18 տարեկան երեխաների հիվանդանոցային բուժօգնությունն անվճար է: 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների, ժամկետային զինծառայողների ընտանիքի անդամների և հատուկ խմբերում ընդգրկված այլ քաղաքացիների բուժօգնության

փաթեթը կընդլայնվի՝ ընդգրկելով սրտի վիրահատական և նորագույն տեխնոլոգիաներով կատարվող բժշկական ծառայություններ:

- Մինչև յոթ տարեկան երեխաներին մեքենայով կարելի է տեղափոխել միայն քարսիթով՝ երեխայի չափով պատրաստված նստատեղով, որն ամրացվում է անվտանգության գոտիներով:

Կառավարության 2019թ. գործունեության ծրագրի կետերից մեկն է մարզային հիվանդանոցների արդիականացումը, մասնավորապես, Վայոց ձորի մարզի նոր բժշկական կենտրոնի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով: Այնուամենայնիվ, որոշվել է վարկային ծրագրից հանել Վայոց ձորի նոր հիվանդանոցի շինարարական և հագեցման աշխատանքները: Ներկայումս կառավարությունը քննարկում է Վայոց ձորի նոր հիվանդանոցի շինարարական և հագեցման աշխատանքները այլ միջոցներով ֆինանսավորելու հարցը:

«Մշակելու և իրականացնելու ենք մարզային առողջապահական ենթակառուցվածքների և մասնագիտական որակյալ ներուժի համաչափ բաշխման ծրագրեր՝ ուղղված մարզերում բուժաշխատողների աշխատանքի խրախուսմանը և մարզային ենթակառուցվածքների այլ կարողությունների զարգացմանը»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

Չնայած ծրագիրը առանձնակի կարևորում էր մարզային առողջապահական ենթակառուցվածքների զարգացումը՝ 2018թ.-ի կեսերից Հայաստանում ծննդօգնություն մատուցող կազմակերպությունների աշխատանքի վերանայման ընթացքում որոշում էր կայացվել փակել Մարալիկի ծննդատունը: Քանի որ նախարարությունը դադարեցրեց ծննդատան ֆինանսավորումը, մարալիկցիները փակել էին Երևան-Գյումրի ճանապարհը և պահանջում էին վերանայել որոշումը: Առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ակցիայի մասնակիցները հայտնեցին,

որ նախարարությունը մասնագետ չի ուղարկում Մարալիկի ծննդատուն: Այդ պատճառով էլ մասնագետները քիչ են: Մարալիկի ծննդատան փակման առնչությամբ մարդու իրավունքների պաշտպանը ուսումնասիրություն է սկսել:

Արսեն Թորոսյանը վստահեցնում է՝ Մարալիկի ծննդատան փակումն իր անձնական որոշումը չէ, այլ մի մեծ գործընթացի հետևանք. նախարարն այս մասին ասել էր լրագրողների հետ ճեպազրույցում՝ կառավարության նիստից հետո: Նախարարը պարզաբանել է, որ «Մարալիկի ծննդատունը փակվում է մի շարք հիմքերով՝ անհրաժեշտ բժիշկների բացակայություն, ծնունդների թվի նվազում, շենքային պայմաններ: Մարալիկի ծննդատունը փակելով՝ մենք որևէ ֆինանսական տնտեսում չենք անում, քանի որ, միևնույն է, այդ գումարները տրվելու են Արթիկի ԲԿ–ին, որը գտնվում է Մարալիկից 15 կմ հեռավորության վրա»:

Մի շարք մասնագետներ ահազանգել են, որ տվյալ սկզբունքով ծննդատների փակումը խնդրի լուծում չի կարող հանդիսանալ:

ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Կառավարության ծրագրով նախանշված ոլորտային գերակայություններից են կրթությունը և գիտությունը:

> *«Կառավարության համար գերակա խնդիր է կրթության և գիտության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման և համընդհանուր բարեկեցության: Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին»:*
>
> ***Կառավարության ծրագիր 2019թ.***

Կառավարությունը ծրագրային բազմաթիվ դրույթներով ամենատարբեր ոլորտներում շեշտել է կրթության և գիտության առանցքային նշանակությունը՝ պետության զարգացման ճանապարհին:

Ազգային ժողովը կրթական ոլորտին առնչվող օրենքի մեկ նախա-

գիծ է ամբողջությամբ ընդունել՝ ուսման վարձի տարաժամկետման վերաբերյալ: Ըստ նախագծի՝ փոփոխություններ են կատարվել «Կրթության մասին» ՀՀ օրենքում, որով հնարավորություն է տրվել վճարովի հիմունքներով սովորողներին իրենց ուսման վարձը մուծել ըստ կիսամյակների կամ ամիսների:

«Իմ քայլը» խմբակցության պատգամավորներից մեկի մշակած օրենքի նախագիծը, որով նախատեսվում էր աշխատող ուսանողների ուսման վարձը մասնակի կամ ամբողջությամբ փոխանցել նրանց վճարած եկամտային հարկերից, չարժանացավ ոլորտի մշտական հանձնաժողովի հավանությանը և չներառվեց ԱԺ լիագումար նիստերի օրակարգում: Այժմ օրենքի նախագիծը որոշակի փոփոխություններով կրկին ներկայացվել է ԱԺ ԿԳՄՍ մշտական հանձնաժողովի քննարկմանը: Ըստ փոփոխությունների՝ եկամտային հարկից իրենց ուսման վճարները կարող են վճարել միայն մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնական ծրագրերում սովորող ուսանողները:

Կառավարությունը կրթության և գիտության ոլորտներում առանձնացրել է մի քանի խնդիրներ և քայլեր ձեռնարկել լուծումներ գտնելու ուղղությամբ:

«Ապահովել բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին կայուն դպրոցական սննդով»:

Կառավարության ծրագիր 2019թ.

Մասնավորապես, ԿԳՄՍ նախարարությունը ապահովել է Արագածոտնի մարզի 117 դպրոցների անցումը «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրին՝ սնունդ տրամադրելով նախակրթարանների և 1-4-րդ դասարանների 7514 սովորողի:

Միաժամանակ հարկ է նշել, որ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում տեղ գտած 2019 թ.-ի կայանալիք կրթական նախաձեռնությունները մեծ մասամբ ուղղված են նորմատիվային դաշտի, իրագործման և վերահսկողության համակարգի ապահով-

ման համար իրավական երաշխիքների և օրենսդրական հիմքերի ստեղծմանը:

Գործադիրը սեպտեմբերի 5-ի նիստում ընդունել է կառավարության ծրագրով նախատեսված՝ մանկավարժների աշխատավարձերի բարձրացման մասին որոշումը: ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների աշխատավարձը սեպտեմբերից բարձրացել է 10%-ով: Ըստ այդմ՝ հանրակրթության ոլորտի պետական հատկացումներն ավելացվել են 1 մլրդ 666 մլն 675 հազար դրամով: ԿԳՄՍՆ մշակած փաթեթի համաձայն՝ փոփոխվում է դպրոցների ֆինանսավորման բանաձևը և սահմանվում է մանկավարժի նվազագույն աշխատավարձ, որը մեկ դրույքի համար կկազմի մոտ 108,000 դրամ: Նախարար Արայիկ Հարությունյանի խոսքով՝ սահմանվել է ուսուցիչների աշխատավարձերի ստորին շեմ, որի հիման վրա էլ կկատարվի աշխատավարձի բարձրացում:

Ամիսներ առաջ հանրային բուռն քննարկման առիթ դարձավ կարծիք ստանալու նպատակով ԲՈՒՀ-երին ուղարկված՝ ԿԳՄՍ նախարարության առաջարկությունների փաթեթը: Հանրային քննարկումների առանցքում հիմնականում ԲՈՒՀ-երում հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն առարկաների պարտադիր դասավանդումը վերացնելու և այն բուհերի գիտական խորհուրդների հայեցողությանը թողնելու կետն էր: Թե՛ լրատվադաշտում, թե՛ մասնագիտական շրջանակներում տևական ժամանակ հիմնականում քննարկվում էր վերոնշյալ հարցը, այնինչ նարխարարության կողմից ներկայացված առաջարկությունների փաթեթում առկա էին նաև շատ կետեր՝ ԲՈՒՀ-երի ինքնավարության, հոգաբարձուների խորհուրդների կազմավորման և ԲՈւՀ-երի կառավարման այլ հարցերի շուրջ:

Նախարարության կողմից փոփոխություններ են նախատեսվում նաև «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում:

Այնուամենայնիվ, հանրային դիսկուրսում և մամուլում քննադատության մեծ ալիք է բարձրանում ուսանողական խմբերից և նախաձեռնություններից: Նրանց գլխավոր մտահոգությունն այն է, որ բարձրագույն կրթության ոլորտում արմատական ռեֆորմներն անհրաժեշտություն են, և դրանց ուշացման կամ բացակայության պայ-

մաններում հեղափոխության հռչակած արժեքները և գաղափարները չեն կարող և չեն մտել ԲՈՒՀ-եր:

Դեռևս այս տարվա փետրվարին ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը հայտարարեց. «Քիչ առաջ ավարտվեց «Բարձրագույն կրթության, գիտության և գիտահետազոտական գործունեության մասին» նոր օրենքի աշխատանքային խմբի հետ առաջին մեծ քննարկումը: Ունենալու ենք հեղափոխական նոր օրենք»:

Օրենքն անդրադառնում է բարձրագույն կրթական հաստատությունների ինքնակառավարման, ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնման հաշվետվողականությանը և թափանցիկությանը, բարձրագույն կրթության, գիտության և տնտեսության համակարգված փոխկապակցվածության, գիտահետազոտական ու նորարարական գործունեության և կրթական համակարգի արդյունավետ փոխգործակցությանը, բարձրագույն կրթության և գիտության ֆինանսավորման արդյունավետությանը և գիտական ոլորտում ներդրումների խրախուսման անհրաժեշտությանը: Վերոնշյալ հարցերին անդրադարձել էր ինչպես «Իմ քայլը» դաշինքը, այնպես էլ կառավարությունը իր ծրագրում.

«Սերտացնելու ենք կրթություն-գիտություն-տնտեսություն կապը: Այս երեք ոլորտներում արդյունավետ փոխգործակցության համար նոր ձեւաչափեր ենք կիրառելու, այդ թվում՝ պետական-մասնավոր գործընկերության և այլ սկզբունքների ակտիվ կիրառության հիման վրա»:

«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիր

«Բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու՝

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության և ակադեմիական ազատությունների ընդլայնմանը, արդյունավետ կառավարման, հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ինստիտուցիոնալ հենքի սփեղծմանը, բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավմանը, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացմանը»:

Կառավարության ծրագիր 2019թ.

ԿԳՄՍ փոխնախարար Արևիկ Անափիոսյանը արդեն գարնանը՝ 2019թ.-ի մարտի 23-ին, «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության կողմից իրականացված աշխատանքային փակ քննարկման ժամանակ նշեց. «Նախարարությունը չի շտապում իրականացնել ռեֆորմներ արագացված տեմպերով, քանի որ դրանում մեծ ռիսկեր կան: Կարճ ժամանակում շոշափելի և տեսանելի դարձած ռեֆորմները կարող են վտանգավոր լինել, քանի որ, որպես կանոն, դրանք պատշաճ պլանավորված և հետազոտված չեն: Նախարարությունը այս պահին պլանավորման փուլում է»:

Սույն զեկույցը պատրաստվել է «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության կողմից՝ Ժողովրդավարության աջակցության եվրոպական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ